

«ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե

Հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 49/3

8 հոկտեմբերի 2013 թ.

Քննարկվեց «Անջելս Տուր» ՍՊԸ 27.08.2013 թ-ի վարչական բողոքը ՀՀ ԿԱ ՊԵԿ ՕՀՎ 05.08.2013 թ-ի թիվ 1004257 ստուգման ակտի դեմ:

Համաձայն ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 04.06.2013 թ-ի թիվ 1004257 հանձնարարագրի «Անջելս Տուր» ՍՊԸ-ում (այսուհետ նաև ընկերություն) կատարվել է բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող ՀՀ օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության ստուգում: Արդյունքում կազմվել է ՀՀ ԿԱ ՊԵԿ ՕՀՎ 05.08.2013 թ-ի թիվ 1004257 ստուգման ակտը (այսուհետ նաև ստուգման ակտ), որով լրացուցիչ գանձման է առաջադրվել ընդամենը 13.368.254 դրամ:

«Անջելս Տուր» ՍՊԸ վարչական բողոքում մասնավորապես նշված է.

1. Ստուգման ակտով արձանագրվել է հետևյալը՝ «Համաձայն ՀՀ ԿԱ ՊԵԿ քննչական վարչության որոշմամբ իրականացված ստուգմամբ պարզվել է, որ «Անջելս Տուր» ՍՊԸ փնթեքի և 50 տոկոս բաժնեմասի սեփականատեր է հանդիսանում Սևան Շիրվանին, որը միաժամանակ 31.05.2006 թ-ից հանդիսանում է անհար ձեռներեց, որը 20.08.2012 թ-ին լուծարվել է: Համաձայն «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի (նախկին խմբագրությամբ) 3-րդ հոդվածի դ) ենթակետի 2009թ-ից մինչև 2012 թ. ընկած ժամանակահատվածը պետք է հանդիսանար ԱԱՀ վճարող ու ներկայացներ ԱԱՀ հաշվարկներ, որը ընկերության կողմից չի կատարվել: ...»:

Տվյալ դեպքում որպես խախտման իրավական հիմք նշվել է «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի (նախկին խմբագրությամբ) 3-րդ հոդվածի «դ» ենթակետը, մինչդեռ 3-րդ հոդվածում «դ» ենթակետը ունի 5-րդ մաս, ըստ որի՝ սույն հոդվածով սահմանված ԱԱՀ-ի շեմը չի կիրառվում այն կազմակերպության նկատմամբ, որի կանոնադրական կամ բաժնեհավաք կապիտալի 20 տոկոսը կամ ավելի մասը (բաժնետոմս, բաժնեմաս, փայտաբաժին) պատկանում է այլ առևտրային կազմակերպությունների կամ անհար ձեռնարկատերերի:

Տվյալ պարագայում Դիմողի կանոնադրական կապիտալի 20 տոկոսը չի պատկանել Ա/Ձ Սևան Շիրվանին: Դիմողն այս եզրահանգմանն է գալիս «Անհատ ձեռնարկատիրոջ մասին» ՀՀ օրենքի մի շարք դրույթների տառացի մեկնաբանության, համակարգային վերլուծության և Ընկերության կանոնադրության հավելվածի, հիմնադիր փաստաթղթերի համադրման արդյունքում:

«Անհատ ձեռնարկատիրոջ մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասի, 3-րդ հոդվածի, և 6-րդ հոդվածի 6-րդ մասի «ա» ենթակետով սահմանված նորմերի տառացի մեկնաբանության արդյունքում հանգում ենք այն եզրակացության, որ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի (նախկին խմբագրությամբ) 3-րդ հոդվածի 5-րդ մասի «դ» ենթակետով նախատեսված կարգավորումը վերաբերելի է այն իրավաբանական անձանց, որոնց կանոնադրական կապիտալի 20 և ավել տոկոս բաժնեմասը պատկանում է անհատ ձեռնարկատիրոջը, այլ ոչ թե ֆիզիկական անձին:

Ընկերության կանոնադրական կապիտալը կազմող 50 տոկոս բաժնեմասի սեփականատեր հանդիսացել է ոչ թե Ա/Ձ Սևան Շիրվանին, այլ Իրանի Իսլամական Հանրապետության քաղաքացի Սևան Շիրվանին: Նշված հանգամանքը հավաստվում է Ընկերության հիմնադիր փաստաթղթերով, այդ թվում՝ ընկերության կանոնադրությամբ: Եթե նույնիսկ ընդունենք, որ Ընկերության կանոնադրական կապիտալը կազմող 50 տոկոս բաժնեմասի սեփականատեր է հանդիսացել Ա/Ձ Սևան Շիրվանին, ապա այս դեպքում հարց է ծագում, թե 2012 թ-ի օգոստոսի 20-ից (Ա/Ձ Սևան Շիրվանին հաշվառումից հանելու օրվանից)

հետո ո՞վ է Ընկերության կանոնադրական կապիտալի 50 տոկոս բաժնեմասի սեփականատերը:

Տվյալ պարագայում որևէ նորմատիվ իրավական ակտով սահմանված չէ իրավաբանական անձի (Դիմողի) պարտականությունը՝ իմանալու՝ իր բաժնետերը հանդիսանում է անհատ ձեռնարկատեր, թե՞ ոչ, արդյոք բաժնետերը մեկ այլ կազմակերպությունում 20 և ավել տոկոս մասնակցություն ունի՞, թե՞ ոչ:

Այլ կերպ ասած՝ անձը պատասխանատվության է ենթարկվում մի արարքի և դրանից բխող իրավական հետևանքների համար՝ չունենալով այդ արարքը կատարելու օրենքով ամրագրված պարտականություն:

Ա/Ձ Սևան Շիրվանին 2008 թ-ի օգոստոսի 13-ին Խորհրդային ՀՏ ներկայացրել է դիմում, որով հայտնել է իր գործունեության ժամանակավոր դադարեցման մասին և հանձնել է պետական գրանցման վկայականը: Այս իրադրությունում Սևան Շիրվանին 2008 թ-ի օգոստոսի 13-ից սկսած հանդես չի ելել որպես անհատ ձեռնարկատեր, և Դիմողին Ակտով հարկային պարտավորությունների առաջադրումը ձևական պահանջների չարաշահման արգելքի սկզբունքի խախտում է:

2. Հիմնավորումներ <Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին> և <Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> ՀՀ օրենքների դրույթների խախտման վերաբերյալ:

<Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին> ՀՀ օրենքի (այսուհետ՝ Ստուգումների մասին օրենք) 6-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ պարբերության 9-րդ և 11-րդ կետերով սահմանված նորմերի, ինչպես նաև <Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> ՀՀ օրենքի 55-րդ հոդվածի 1-ին մասի և 57-րդ հոդվածի 1-ին մասի տառացի մեկնաբանության և համակարգային վերլուծության արդյունքում Դիմողը հանգում է այն եզրակացության, որ ստուգման արդյունքում բացահայտված խախտումներն ակտում նշելու վարչական մարմնի պարտականությունը ենթադրում է խախտման փաստական հիմքերի, դրանք հավաստող ապացույցների, ինչպես նաև դրանցով պայմանավորված իրավական հիմքերի նշում:

3. Հիմնավորումներ գոյություն չունեցող իրավական նորմերի կիրառման վերաբերյալ:

<Իրավական ակտերի մասին> ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 5-րդ մասի, 8-րդ հոդվածի, 23-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթներն անհատական իրավական ակտ ընդունող սուբյեկտին (վարչական մարմնին) ուղղակիորեն պարտավորեցնում են ընդունել միայն այնպիսի անհատական իրավական ակտեր, որոնք ընդունվում են նորմատիվ իրավական ակտի համաձայն, այսինքն՝ ի կատարումն այդ ակտի և դրա հիման վրա: Ավելին՝ անհատական ակտերը պետք է համապատասխանեն ՀՀ Սահմանադրությանը և օրենքներին:

Տվյալ պարագայում Վարչական մարմինը կիրառել է այնպիսի իրավանորմ և Դիմողին պատասխանատվության է ենթարկել մի նորմատիվ իրավական ակտով նախատեսված կարգավորումը (<Ավելացված արժեքի հարկի մասին> ՀՀ օրենք 3-րդ հոդված) խախտելու համար, որն ստուգման ակտի կազմման պահին չի գործել: Այլ կերպ ասած՝ Վարչական մարմինը ենթարկում է հարկային (հանրային իրավական) պատասխանատվության գոյություն չունեցող նորմի խախտման համար:

4. Հիմնավորումներ <Ավելացված արժեքի հարկի մասին> ՀՀ օրենք 5-րդ, 16-րդ հոդվածներով սահմանված նորմերի խախտման վերաբերյալ:

Հարկ ենք համարում Վարչական մարմնի ուշադրությունը հրավիրել նաև այն հանգամանքին, որ ստուգման ակտում 5.379.032 դրամի չափով հաշվարկված ավելացված արժեքի հարկից մոտ 3.900.000 դրամը հաշվարկվել է այն հարկման օբյեկտների (գործառնությունների) շրջանառության նկատմամբ, որոնց վերաբերյալ պետք է տարածվի ավելացված արժեքի հարկի գրոյական դրույքաչափ:

Դիմողի այս եզրահանգման համար իրավական հիմք են հանդիսանում <Ավելացված արժեքի հարկի մասին> ՀՀ օրենքի 5-րդ, 16-րդ հոդվածներով սահմանված դրույթները: Մասնավորապես՝ <Ավելացված արժեքի հարկի մասին> ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի համաձայն՝

ԱԱՀ-ով հարկվող օբյեկտ է համարվում Հայաստանի Հանրապետության տարածքում ԱԱՀ վճարողների կողմից իրականացվող սույն օրենքի 6 հոդվածով սահմանված բոլոր գործարքների (գործառնությունների) ամբողջ արժեքը (շրջանառությունը), եթե օրենքով այլ բան չի նախատեսված: Նույն օրենքի 16-րդ հոդվածի 8-րդ մասով ամրագրված է, որ ԱԱՀ-ի գրոյական դրույքաչափով հարկումը՝ սույն հոդվածում նշված գործարքների իրացման շրջանառության (հոդվածում այսուհետ՝ հարկվող շրջանառություն) նկատմամբ ԱԱՀ-ի գրոյական դրույքաչափի կիրառումն է այն ծառայությունների հարկվող շրջանառության նկատմամբ, որոնց մատուցման վայրը, համաձայն սույն օրենքի, չի գտնվում Հայաստանի Հանրապետության ներքին տարածքում:

Ընկերությունը՝ որպես գրոսաշրջային գործունեություն իրականացնող սուբյեկտ, իր կողմից մատուցվող գրոսաշրջային ծառայությունների մի մասը մատուցել է ՀՀ տարածքից դուրս, ինչը նշանակում է, որ այդ գործարքների իրացման շրջանառության (մոտ 24.000.000 դրամ) նկատմամբ պետք է կիրառվեր ավելացված արժեքի հարկի գրոյական դրույքաչափ:

5. Հիմնավորումներ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենք 34-րդ հոդվածով սահմանված նորմերի խախտման վերաբերյալ:

«Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենք 34-րդ հոդվածի համաձայն՝ գրոսաշրջության գործունեության մասով ԱԱՀ-ով հարկվող շրջանառությունը որոշվում է սույն օրենքի 8 հոդվածին համապատասխան՝ առանց միջազգային ուղևորափոխադրման համար գրոսաշրջային օպերատորի կամ գրոսաշրջային գործակալի կողմից վճարվող գումարի: Օպարերկրյա գրոսաշրջիկին մատուցվող գրոսաշրջային ծառայությունները, ինչպես նաև գրոսաշրջիկային գործակալությունների կողմից մատուցվող գործակալական ծառայություններն ազատվում են ավելացված արժեքի հարկից, եթե այդ ծառայությունների շրջանակներում ուղևորությունները, ճանապարհորդությունները, էքսկուրսիաներն իրականացվում են Հայաստանի Հանրապետության տարածքում:

Ստուգման ընթացքում Վարչական մարմինը մասամբ հաշվի չի առել այն իրողությունը, որ ընկերությունը՝ որպես գրոսաշրջային գործունեություն իրականացնող սուբյեկտ, իր կողմից մատուցվող գրոսաշրջային ծառայությունների մի մասով ազատված է եղել ավելացված արժեքի հարկի վճարման պարտականությունից, քանի որ գրոսաշրջային ծառայությունները մատուցվել են օտարերկրյա գրոսաշրջիկներին ՀՀ տարածքում: Արդյունքում նշված նորմի խախտմամբ Վարչական մարմինը միայն ավելացված արժեքի հարկի ապառքի մասով առաջադրել է 1.478.465 դրամի չափով պարտավորություն:

6. Հիմնավորումներ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 30.1-րդ հոդվածով սահմանված նորմերի խախտման վերաբերյալ:

«Հարկերի մասին» ՀՀ օրենք 30.1-րդ հոդվածի առաջին պարբերության իմաստով հարկային օրենսդրությամբ սահմանված կարգով հարկային պարտավորությունների հաշվարկման առումով խախտման կատարման փորձ է համարվում համապատասխան հաշվարկի, հայտարարագրի, հաշվետվության, տեղեկության կամ այլ փաստաթղթի (անկախ դրանց ներկայացման հանգամանքից)՝ հարկային մարմին ներկայացնելու համար օրենքով սահմանված ժամկետի վերջին օրը ներառող օրացուցային փորձ:

Ստուգման ակտը, որով հայտնաբերվել է խախտումը, և Դիմողը ենթարկվել է պատասխանատվության, կազմվել է 2013 թվականի օգոստոսի 5-ին, մինչդեռ Ակտով Դիմողը պատասխանատվության է ենթարկվել նաև 2010 թվականի երկրորդ եռամսյակի համար, որի վաղեմության վերոնշյալ ժամկետներն արդեն իսկ ավարտվել էին: Նշված ժամանակահատվածի համար միայն ավելացված արժեքի հարկի ապառքի մասով Դիմողին առաջադրվել է լրացուցիչ պարտավորություն:

7. Հիմնավորումներ 2012 թ-ի օգոստոսի 20-ից հետո ընկած ժամանակահատվածի համար ավելացված արժեքի հարկի մասով հարկային պարտավորությունների առաջադրման անհիմն լինելու վերաբերյալ:

«Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի (նախկին խմբագրությամբ) 3-րդ հոդվածի 1-ին մասով ամրագրված է, որ *անձինք, որոնց կողմից նախորդ օրացուցային*

տարում իրականացված՝ սույն օրենքի 6 հոդվածի 1-ին, 2-րդ և (կամ) 3-րդ կետերով սահմանված գործարքների (գործառնությունների) հարկվող շրջանառությանը չի գերազանցել 58,35 միլիոն դրամը, տվյալ օրացուցային տարում ԱԱՀ վճարող են համարվում այդ գործարքների հարկվող շրջանառությանը 58,35 միլիոն դրամը գերազանցելու պահից՝ 58,35 միլիոն դրամը (ԱԱՀ-ի շենը) գերազանցող մասի համար:

Սույն օրենքի (նախկին խմբագրությամբ) 3-րդ հոդվածի 5-րդ մասի <դ> ենթակետի համաձայն՝ սույն հոդվածով սահմանված ԱԱՀ-ի շենը չի կիրառվում այն կազմակերպության նկատմամբ, որի կանոնադրական կամ բաժնեհավաք կապիտալի 20 տոկոսը կամ ավելի մասը (բաժնետիրոս, բաժնեմաս, փայտբաժին) պատկանում է այլ առևտրային կազմակերպությունների կամ անհատ ձեռնարկատերերի:

Նշված նորմի տառացի մեկնաբանումից ուղղակիորեն բխում է, որ դրա կիրառման համար պայման է կազմակերպության կանոնադրական կամ բաժնեհավաք կապիտալի 20 տոկոս կամ ավելի մասն այլ կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջը պատկանելու հանգամանքը: Եթե նույնիսկ ընդունենք, որ Սևան Շիրվանին որպես անհատ ձեռնարկատեր է հիմնադրել և հանդիսացել Դիմողի կանոնադրական կապիտալի 50 տոկոս բաժնեմասի սեփականատեր, ապա վերջինս, 2012 թ-ի օգոստոսի 20-ից սկսած, որպես անհատ ձեռնարկատեր դադարել է գոյություն ունենալուց, ինչը նշանակում է, որ այդ պահից սկսած՝ <Ավելացված արժեքի հարկի մասին> ՀՀ օրենքի (նախկին խմբագրությամբ) 3-րդ հոդվածի 5-րդ մասի <դ> ենթակետի նորմի կիրառման համար անհրաժեշտ պայման առկա չի եղել:

Նշված նորմի խախտմամբ 2012 թվականի օգոստոսի 20-ից մինչև 2012 թվականի ավարտը միայն ավելացված արժեքի հարկի ապառքի մասով Դիմողին առաջադրվել է 1.904.730 դրամի չափով պարտավորություն:

Վերոգրյալի հիման վրա և հիմք ընդունելով <Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> ՀՀ օրենքն ընկերությունը խնդրում է մասնակի՝ 5-րդ կետի մասով անվավեր ճանաչել ՀՀ ԿԱ ՊԵԿ ՕԿՎ 2013 թ-ի օգոստոսի 5-ի թիվ 1004257 ստուգման ակտը:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), լսելով ընկերության ներկայացուցիչների և ստուգման ակտը կազմած պաշտոնատար անձանց ներկայացրած փաստարկները, ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Ընկերության բողոքում բերված այն պնդումը, որ Ընկերության կանոնադրական կապիտալը կազմող 50 տոկոս բաժնեմասի սեփականատեր հանդիսացել է ոչ թե Ա/2 Սևան Շիրվանին, այլ Իրանի Իսլամական Հանրապետության քաղաքացի Սևան Շիրվանին և դրանից բխող հետևությունները, չեն համապատասխանում իրականությանը: Մասնավորապես, համաձայն ՀՀ ԱՆ աշխատակազմի իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության պետի 09.08.2013 թ-ի թիվ 1335-13 գրության, Սևան Շիրվանին որպես անհատ ձեռնարկատեր հաշվառման է կանգնել 31.05.2006 թ-ին (վկայականի համարը 01Ա100387), իսկ 20.08.2012 թ-ին հաշվառումից հանվել է: Այսինքն, 31.05.2006 թ-ից մինչև 20.08.2012 թ-ն ընկած ժամանակահատվածում Սևան Շիրվանին հանդիսացել է անհատ ձեռնարկատեր:

Բողոքում բերված այն պնդումների վերաբերյալ, որ Ընկերության կողմից մատուցվող գրոսաշրջային ծառայությունների մի մասը մատուցվել է ՀՀ տարածքից դուրս, ինչը նշանակում է, որ այդ գործարքների իրացման շրջանառության (մոտ 24.000.000 դրամ) նկատմամբ պետք է կիրառվեր ավելացված արժեքի հարկի գրոյական դրույքաչափ, նշվեց հետևյալը:

Համաձայն <Ավելացված արժեքի հարկի մասին> ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի. <Ծառայությունը համարվում է մատուցված Հայաստանի Հանրապետությունում, եթե ծառայությունների մատուցման վայրը գտնվում է Հայաստանի Հանրապետության տարածքում:

Ծառայությունների մատուցման վայր է համարվում այն տեղը, որտեղ ծառայություն մատուցող անձը իրականացնում է ձեռնարկատիրական գործունեություն, իսկ այդպիսի վայրի բացակայության կամ որոշման անհնարինության դեպքում՝ նշված անձի գտնվելու վայրը (իրավաբանական հասցեն կամ բնակության վայրը, բացառությամբ սույն օրենքի 14 հոդվածով սահմանված դեպքերի)»:

Վերոգրյալ իրավանորմի դրույթները հիմք են տալիս եզրակացության համար, որ ընկերության կողմից զբոսաշրջային ծառայությունները մատուցվել են ՀՀ տարածքում, հետևապես այդ գործարքների իրացման շրջանառության նկատմամբ ավելացված արժեքի հարկի գոյական դրույքաչափ կիրառելի չէ:

Բողոքում բերված այն պնդման վերաբերյալ, որ ստուգմամբ հաշվի չի առնվել, որ ընկերությունը կողմից մատուցվող զբոսաշրջային ծառայությունները մի մասով ազատված են եղել ավելացված արժեքի հարկի վճարման պարտականությունից, քանի որ զբոսաշրջային ծառայությունները մատուցվել են օտարերկրյա զբոսաշրջիկներին ՀՀ տարածքում, նշվեց հետևյալը:

<Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. <Զբոսաշրջային գործունեության սուբյեկտների կողմից զբոսաշրջային արդյունքը տրամադրվում է սպառողի հետ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գրավոր պայմանագրի կնքմամբ>:

Ստուգումն իրականացրած պաշտոնատար անձը նշեց, որ այն բոլոր զբոսաշրջային ծառայությունները, որոնք մատուցվել են օտարերկրյա զբոսաշրջիկներին ՀՀ տարածքում և վերջիններիս հետ սահմանված կարգով կնքվել են գրավոր պայմանագրեր, ստուգման ընթացքում հաշվի են առնվել (մոտավորապես 1.200.000 դրամի չափով) և այդ մասով ավելացված արժեքի հարկի գծով պարտավորություններ չեն առաջադրվել:

<Հարկերի մասին> ՀՀ օրենքի 30.1-րդ հոդվածով սահմանված նորմի կիրառման վերաբերյալ նշվեց հետևյալը:

<Հարկերի մասին> ՀՀ օրենքի 30.1-րդ հոդվածի համաձայն. <Հարկային օրենսդրության խախտումներ հայտնաբերելու դեպքում հարկային պարտավորություններ չեն կարող առաջանալ, եթե տվյալ խախտումը հայտնաբերվել է այն կատարելու տարվան անմիջապես հաջորդող երեք տարին լրանալուց հետո, բացառությամբ <Գույքահարկի մասին> և <Նոդի հարկի մասին> Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված դեպքերի>:

Ելնելով վերոգրյալ իրավանորմի տառացի մեկնաբանությունից՝ Հանձնաժողովը գտնում է, որ ստուգման ակտով, որը կազմվել է 2013 թվականի օգոստոսի 5-ին, լրացուցիչ պարտավորություններ կարող են առաջադրվել նաև 2010 թ-ի երկրորդ եռամսյակում կատարված խախտումների համար:

<Ավելացված արժեքի հարկի մասին> ՀՀ օրենքի (նախկին խմբագրությամբ) 3-րդ հոդվածի 5-րդ մասի <դ> ենթակետի նորմի կիրառման վերաբերյալ նշվեց հետևյալը:

<Ավելացված արժեքի հարկի մասին> ՀՀ օրենքի (նախկին խմբագրությամբ) 3-րդ հոդվածի 5-րդ մասի <դ> ենթակետի համաձայն՝ սույն հոդվածով սահմանված ԱԱՀ-ի շեմը չի կիրառվում այն կազմակերպության նկատմամբ, որի կանոնադրական կամ բաժնետիրական կապիտալի 20 տոկոսը կամ ավելի մասը (բաժնետոմս, բաժնեմաս, փայաբաժին) պատկանում է այլ առևտրային կազմակերպությունների կամ անհատ ձեռնարկատերերի:

Քննարկվող դեպքում Ա/Ձ Սևան Շիրվանին հանդիսացել է ընկերության կանոնադրական կապիտալի 50 տոկոս բաժնեմասի սեփականատերը, որը, սակայն, 2012 թ-ի օգոստոսի 20-ին լուծարվել է: Հետևաբար, լուծարումից հետո ընկած ժամանակահատվածի համար <Ավելացված արժեքի հարկի մասին> ՀՀ օրենքի (նախկին խմբագրությամբ) 3-րդ հոդվածի 5-րդ մասի <դ> ենթակետի դրույթները կիրառելի չեն:

Հանձնաժողովի համոզմամբ, Ա/Ձ Սևան Շիրվանի լուծարումից հետո ընկած ժամանակահատվածի համար ավելացված արժեքի հարկի գծով լրացուցիչ առաջադրված պարտավորությունը ստուգման ակտից ենթակա է նվազեցման:

Հանձնաժողովի 10.09.2013 թ-ի նիստի քննարկման արդյունքում սույն գործի վերաբերյալ ընդունվել է որոշման նախագիծ, որի համաձայն ստուգման ակտի 5-րդ կետից նվազեցվել է 2012 թվականի օգոստոսի 20-ից հետո ընկած ժամանակատվածի համար ավելացված արժեքի հարկի գծով լրացուցիչ առաջադրված պարտավորությունը՝ ընդհանուր գումարով 3.634.025 դրամ:

Ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 10-ի <Գանգատարկման խորհուրդ ստեղծելու և վերադաս հարկային ու մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովների որոշումների քննարկման կարգը հաստատելու մասին> N 1361-Ն որոշմամբ հաստատված կարգի (այսուհետ՝ Կարգ) 4-րդ կետի, սույն գործի վերաբերյալ Հանձնաժողովի կողմից ընդունված որոշման նախագիծը, գանգատը և դրան առնչվող նյութերը (գանգատի փաթեթը) ուղարկվել են վերադաս հարկային ու մաքսային մարմինների գանգատարկման խորհուրդ:

Որոշման նախագծի վերաբերյալ Գանգատարկման խորհուրդը տվել է հետևյալ եզրակացությունը.

Առաջարկել հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովին <Անջելա Տուր> ՍՊԸ-ի կողմից ներկայացված դիմում-գանգատի վերաբերյալ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովի որոշման նախագծում կատարել համապատասխան փոփոխություն՝ անփոփոխ թողելով ստուգման ակտի 5-րդ կետով <Անջելա Տուր> ՍՊԸ-ին առաջադրված լրացուցիչ հարկային պարտավորությունները:

Հանձնաժողովը, վերանայելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները, ինչպես նաև հաշվի առնելով Գանգատարկման խորհրդի եզրակացությունը գտնում է, որ <Անջելա Տուր> ՍՊԸ վարչական բողոքը ենթակա է մերժման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով <Հարկային ծառայության մասին> ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո թ ո շ ու մ է՝

Ստուգման ակտը թողնել անփոփոխ:

Որոշմանը չհամաձայնվելու դեպքում տնտեսավարող սուբյեկտի ղեկավարը կամ նրան փոխարինող պաշտոնատար անձն իրավունք ունի բողոքարկել դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ